1182. ԽԱՉՔԱՐ. գեղաքանդակ, քիվի տակ երկու կլոր և մեկ սրանկյուն զարդեր, քիվին 2 տող մաշված ու ոչնչացած.



[ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍԲ ԽԱ]ՉՍ Ի ԲԱՐ[ԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ]
...ՍԱՐԳՍԻ: ՈՐՔ ԵՐԿԻՐՊԱԳԱՆԵՔ ԱՂԱՒ[ԹՍ ՅԻՇԵՑԷՔ]:

Ծանոթ. Գերեզմանոցի առավել հմտամշակ բուսական ու երկրաչափական զարդերով, հորինվածքի անսովորությամբ խաչքար է, ԺԳ դար:

1183. ԽԱՉՔԱՐ. ընկած գերեզմանոցի հյուսիսային եզրի կիսավեր միանավ եկեղեցու հյուսիսարևելյան խորանում, քիվին կիսաեղծ, 2 տող.



[ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐ]ԵԽՕՍ Է ԱՐ...
... ԹՎԻ[Ն] ՌՆԽ (1691):

Ծանոթ. Խաչքարի (1,12x0,13x0,13) քիվի տակ, եզրերում, մարդկանց հարթաքանդակներ են, կողերին՝ երկրաչափական հյուսքազարդեր:

ԱՇՈՑՔԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Զբաղեցնում է Լոռվա սարահարթի հյուսիսարևմտյան հատվածը՝ Թուրքիայի և Վրաստանի սահմանակցությամբ: Եղել է Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Տաշիր-Աշոցք գավառների կազմում: 1937 թ. մինչև վերջերս կոչվում էր Կալինինոյի շրջան:

Հարուստ է վաղ բրոնզի և երկաթի դարաշրջանների բնակատեղիներով, ամրոցներով, դամբարանադաշտերով: Պահպանվում են նաև վաղ միջնադարյան քրիստոնեական ճարտարապետության կիսավեր ու կանգուն հուշարձաններ (Մեծավանք, Խրբեքի վանք, Չախմախի միանավ սրահ, Դարբանդավանք), որոնց վրա, ցավոք, արձանագրություններ չկան:

Շրջանում հոգևոր կրթամշակութային կենտրոններ չեն ստեղծվել ոչ միայն ամառանոցային-արոտավայրային տարածք լինելու, այլ նաև թուրքական, պարսկական ներխուժումներով, բնակչության տեղահանություններով պարտադրվող անբարենպաստ պայմանների պատճառով: Իսկ նոր եկողները զորու չէին լուրջ ձեռնարկումների և ԺԹ դ. սկզբներին Ալաշկերտից գաղթածները մի կերպ ցածրարվեստ ծխական եկեղեցիներ էին կառուցում: Մի շարք լքված գյուղերում էլ վերաբնակվում էին թուրքեր, քրդեր, հույներ, մալականներ, որոնք ոչ միայն հոգևոր շենքերի կարիք չունեին, այլ նաև ջանադրաբար ոչնչացնում էին հնից մնացածները:

XIX դ. եկեղեցիների շինարարական բնույթի վկայագրերը չեն մտել պրակի մեջ: